ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

08.09.2020
346-21

ՀՀ Առողջապահության նախարար
Արսեն Թորոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թորոսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դպրոցների անձնակազմի՝ Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) թեստավորման հետ կապված հարցմամբ 2020թ. օգոստոսի 27-ին դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարություն: Վերջինս 2020թ. սեպտեմբերի 7-ի գրությամբ տեղեկացրել է, որ Առողջապահության նախարարությունն է զբաղվում այս գործընթացով (պատասխան գրությունը կցվում է):

Ուստի, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածները եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ըստ Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման Ուղեցույցի՝ նախատեսվում է COVID 19-ի թեստավորում կատարել ՀՀ բոլոր դպրոցների անձնակազմերի անդամների համար: Խնդրում ենք տեղեկացնել, թե այս նախնական թեստավորումը ի՞նչ միջոցներով է կատարվելու (դրամաշնորհ, պետ. բյուջե կամ այլ), ներառյալ մասնավոր դպրոցներում:

2. Առկա՞ է կոնկրետ հաշվարկ, թե որքան է կազմում այս նախնական թեստավորման արժեքը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան